ՏԵՂԵԿԱՆՔ

Զանգվածային լրատվության միջոցներով թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և թմրամիջոցներին առնչվող այլ հրապարակումների մշտադիտարկման արդյունքները 2020-2022 թթ.

2023

Շվեդիա Sverige
Democracy Development Foundation
SIGRID RAUSING TRUST

Հեղինակային խումբ

Կազմեց՝ Մարիետա Թեմուրյան

Խմբագրեց՝ Արթուր Սաքունց

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շնորհակալություն է հայտնում Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալությանը և Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին այս հրապարակումը հնարավոր դարձնելու համար:

Զեկույցում ներկայացված տեսակետները և վերլուծությունները հեղինակներինն են, և պարտադիր չէ, որ համընկնեն նշված կազմակերպությունների տեսակետների և դիրքորոշումների հետ:

Բովանդակություն

Նախաբան 4

Հրապարակումների աղբյուրները 6

Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա դրանց ազդեցությունը 10

Հրապարակումների բնույթը 10

Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա 11

Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա 12

Հրապարակումներում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը 13

Ամփոփում 16

Նախաբան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը պարբերաբար մշտադիտարկում է զանգվածային լրատվության միջոցները, հավաքագրում և վերլուծության ենթարկում թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամիջոցների վերաբերյալ այլ հրապարակումները[1]: Մշտադիտարկումը նպատակ ունի հրապարակումների բովանդակության գնահատման միջոցով բացահայտել թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ պետական քաղաքականության բնույթը, ինչպես նաև այդ հրապարակումների ազդեցությունը հանրային կարծիքի ձևավորման վրա:

Սույն տեղեկանքում ներկայացված են 2020-2022 թթ. հրապարակումների վերլուծության արդյունքները:

Մշտադիտարկվել է 16 կայքէջ. 12 լրատվական կայքէջ՝ news.am, a1plus.am, lragir.am, 168.am, 7or.am, epress.am, ilur.am, galatv.am, armlur.am, politik.am, operativ.am, hhpress.am և 4 պետական մարմինների պաշտոնական կայքէջ՝ ոստիկանության (police.am), առողջապահության նախարարության (moh.am), գլխավոր դատախազության (prosecutor.am) և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (mlsa.am):

Հրապարակումները վերլուծվել են հետևյալ մեթոդաբանությամբ՝

1. դասակարգվել են ըստ տարածման աղբյուրի՝

- *պետական մարմինների պաշտոնական կայքէջերով հրապարակված նյութեր*
- *զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված նյութեր*

2. խմբավորվել են ըստ պետական մարմինների, կազմակերպությունների և մարդկանց խմբերի

3. դասակարգվել են ըստ բովանդակության՝

- քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ հրապարակումներ (*քրեական հետապնդում, բերման ենթարկում, ձերբակալում, նախաքննություն, դատաքննություն, պատժի նշանակում, թմրամիջոց գործածող*

[1] Մշտադիտարկման արդյունքում կազմված նախորդ տեղեկանքները տե՛ս հետևյալ հղումներով՝ https://hcav.am/wp-content/uploads/2020/08/drug-users-media-2018-2019.pdf, https://drive.google.com/file/d/13GlsTnLigngKc7mhzyiOZJ-F1Q-J8yg3/view, http://archive.hcav.am/wp-content/uploads/2017/04/Տեղեկանք-ԶԼՄ-թմրամիջոց-2016.pdf, http://archive.hcav.am/wp-content/uploads/2016/04/թմր-տեղեկանք-03.03.2016-երկրորդ.pdf

անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի ու պատասխանատվության միջոցների կիրառում)

- ընդհանուր բնույթի տեղեկատվական նյութեր *(վիճակագրական տվյալներ ներկայացնող, թմրամիջոցների ազդեցության, կիրառության, գործածման, հետազոտությունների, ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում պետական քաղաքականության վերաբերյալ)*

4. քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ հրապարակումներն իրենց հերթին խմբավորվել են ըստ հետևյալ թեմաների՝

- թմրամիջոց գործածող անձանց կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը չվերաբերող հանցագործությունների կատարման վերաբերյալ հրապարակումներ
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հրապարակումներ՝ կոնկրետ անձանց կամ խմբերի մատնանշմամբ
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հրապարակումներ՝ առանց կոնկրետ անձանց կամ խմբերի մատնանշման
- քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդման, քրեական պատասխանատվության և քրեադատավարական այլ գործողությունների մասին նյութեր

5. հրապարակված նյութերը գնահատվել են թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրների նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից՝

- դրական վերաբերմունք ձևավորող
- բացասական վերաբերմունք ձևավորող
- չեզոք բնույթի նյութեր (դրական կամ բացասական վերաբերմունք չեն ձևավորում) և

թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ ազդեցության տեսանկյունից՝

- բացասական վերաբերմունք ձևավորող *(թմրամիջոցների գործածման բացասական հետևանքների մասին տեղեկություններ պարունակող նյութեր)*
- դրական վերաբերմունք ձևավորող *(թմրամիջոցների գործածումը խրախուսող նյութեր)*
- չեզոք բնույթի նյութեր *(նյութեր, որոնք չեն անդրադառնում թմրամիջոցների գործածման բացասական հետևանքներին և խրախուսում դրանց գործածումը)*:

Առանձնացվել են նաև այն հրապարակումները, որոնք տեղեկատվություն են պարունակում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, ինչպես նաև այն

հրապարակումները, որոնք պարունակելով անձին նույնականացնող անձնական տվյալներ՝ խախտում են անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:

Հրապարակումների աղբյուրները

2020-2022 թթ. հավաքագրվել է թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և առհասարակ թմրամիջոցներին վերաբերող 5064 հրապարակում (1307 հրապարակում 2020 թ., 1762՝ 2021 թ. և 1995՝ 2022 թ.[2]):

5064 հրապարակումներից 1185-ը տարածվել է պետական մարմինների պաշտոնական ինտերնետային էջերով (ոստիկանություն, դատախազություն, առողջապահության և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ), 3879-ը՝ զանգվածային լրատվության միջոցներով:

Կազմակերպության կողմից երկարատև մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ շարունակում են գերակշռել ՀՀ ոստիկանության կողմից և վերջինիս տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումները: 2020-2022 թթ. ՀՀ ոստիկանության կողմից հրապարակումների թիվը կազմել է 1146, որն այդ տարիներին հրապարակումների ավելի քան 22 տոկոսն է (տե՛ս աղյուսակ 1): Զանգվածային լրատվության միջոցներով ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը կազմել է 1798, որը նույն ժամանակահատվածում հավաքագրված հրապարակումների ավելի քան 35 տոկոսն է (տե՛ս աղյուսակ 2): Այսպիսով, 2020-2022 թթ. հավաքագրված 5064 հրապարակումների կեսից ավելին (58 տոկոս) ՀՀ ոստիկանության կողմից և վերջինիս տրամադրած տեղեկատվության հիման վրա են:

Նույն ժամանակաշրջանում ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից հրապարակումների թիվն ընդամենը 13 է (0.3 տոկոս), իսկ զանգվածային լրատվության միջոցներով նշված նախարարությունների տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումները՝ 31 (0.6 տոկոս): Այսինքն, առողջապահական և սոցիալական բաղադրիչի համար պատասխանատու գերատեսչությունների կողմից և վերջիններիս տրամադրած տեղեկատվության հիման

[2] 2020 թ. հավաքագրված 1303 հրապարակումները վերաբերել են 499 դեպքի, 2021 թ. հավաքագրված 1755 հրապարակումները՝ 656 դեպքի, 2022 թ. հավաքագրված 1987 հրապարակումները՝ 844 դեպքի: Այսինքն՝ միևնույն անձի կամ դեպքի վերաբերյալ եղել են մեկ կամ մեկից ավելի հրապարակումներ:

վրա հրապարակումները չեն կազմում 2020-2022 թթ. հավաքագրված 5064 հրապարակումների նույնիսկ 1 տոկոսը (0.9 տոկոս)։

ՀՀ դատախազության կողմից հրապարակումների թիվը 2020-2022 թթ. կազմել է 26 (0.5 տոկոս), իսկ վերջինիս տրամադրած տեղեկատվության հիման վրա զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների թիվը՝ 67 (1.3 տոկոս)։

Աղյուսակ 1

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ տարածման աղբյուրի

N	Տեղեկատվության տարածման աղբյուրը	2020 թ.		2021 թ.		2022 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	**Թիվը**	**Տոկոսը**
1	Պետական մարմնի պաշտոնական ինտերնետային էջ, որից	252	19.3	340	19.3	593	29.7	**1185**	**23.4**
	ՀՀ ոստիկանություն[3]	*247*	*18.9*	*327*	*18.6*	*572*	*28.7*		
	ՀՀ առողջապահության նախարարություն	*1*	*0.1*	*4*	*0.2*	*5*	*0.3*		
	ՀՀ դատախազություն	*4*	*0.3*	*7*	*0.4*	*15*	*0.6*		
	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	*0*	*0*	*2*	*0.1*	*1*	*0.1*		
2	Զանգվածային լրատվության միջոց	1055	80.7	1422	80.7	1402	70.3	**3879**	**76.6**
Ընդամենը		**1307**	**100**	**1762**	**100**	**1995**	**100**	**5064**	**100**

Աղյուսակ 2

Զանգվածային լրատվության միջոցներով տարածված հրապարակումների դասակարգումը՝ ըստ ՀՀ-ում գործող պետական մարմիններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության

N	Պետական մարմիններ	2020 թ.		2021 թ.		2022 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Ոստիկանություն	427	51	574	53.7	797	68.3	1798	58.5
2	Արդարադատության նախարարություն	112	13.4	167	15.6	82	7	361	11.7
	Այդ թվում՝								
	Քրեակատարողական ծառայություն	*111*	*13.3*	*166*	*15.5*	*75*	*6.4*	*352*	*11.4*
3	Հատուկ քննչական ծառայություն[4]	7	0.8	0	0	0	0	7	0.2
4	Քննչական կոմիտե	108	12.9	103	9.6	96	8.2	307	10
5	Պետական եկամուտների կոմիտե	112	13.4	119	11.1	93	8	324	10.5
6	Ազգային անվտանգության	40	4.8	28	2.6	12	1	80	2.6

[3] ՀՀ ոստիկանության կայքի լրահոսում հրապարակվող «Օպերատիվ իրավիճակը հանրապետությունում» հոդվածաշարը չի հավաքագրվել և վերլուծվել, քանի որ պարունակել են լրահոսում հրապարակումների միևնույն տեղեկատվությունը։

[4] 2021 թվականի մարտի 24-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունը լուծարվել է։

	ծառայություն								
7	Առողջապահության նախարարություն	16	1.9	9	0.8	5	0.4	30	1
	Այդ թվում՝								
	Կախվածությունների բուժման ազգային կենտրոն	*6*	*0.7*	*3*	*0.3*	*3*	*0.3*	*12*	*0.4*
	Գյումրու հոգեկան առողջության կենտրոն	*1*	*0.1*	*0*	*0*	*0*	*0*	*1*	*0.03*
8	Կառավարություն	7	0.8	22	2.1	9	0.8	38	1.2
9	Դատախազություն	1	0.1	19	1.8	47	4	67	2.2
10	Ազգային ժողով/պատգամավոր	4	0.5	18	1.7	17	1.5	39	1.3
11	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	0	0	0	0	1	0.1	1	0.1
12	Այլ	3	0.4	11	1	8	0.7	22	0.7
Ընդամենը		**837**	**100**	**1070**	**100**	**1167**	**100**	**3074**	**100**
N	**Այլ մարմիններ, մասնավոր կազմակերպություններ և/կամ ոչ պաշտոնատար անձինք**	**Թիվը**	**Տոկոսը**	**Թիվը**	**Տոկոսը**	**Թիվը**	**Տոկոսը**	**Թիվը**	**Տոկոսը**
1	Քաղաքացիներ	2	0.9	14	4	3	1.3	19	2.4
2	Փաստաբաններ և/կամ իրավաբաններ	2	0.9	2	0.6	3	1.3	7	0.9
3	Հասարակական և/կամ միջազգային կազմակերպություն	3	1.4	6	1.7	1	0.4	10	1.2
6	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	0	0	2	0.6	0	0	2	0.2
8	Այլ	1	0.5	4	1.1	6	2.5	11	1.4
9	*Զանգվածային լրատվության միջոցներ*	*210*	*96.3*	*324*	*92*	*224*	*94.5*	*758*	*93.9*
Ընդամենը		**218**	**100**	**352**	**100**	**237**	**100**	**807**	**100**
Ընդհանուր		**1055**		**1422**		**1404***		**3881**	

* *Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումների ընդհանուր թվից այս թվի տարբերությունը պայմանավորված է հրապարակումներից երկուսում միաժամանակ պետական մարմիններից և այլ աղբյուրներից տեղեկատվության առկայությամբ:*

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, զանգվածային լրատվության միջոցներով տարածվող հրապարակումների աղբյուր բացի ՀՀ ոստիկանությունից հաճախ հանդիսանում են նաև այլ իրավապահ մարմիններ: 5064 հրապարակումների մոտ 7 տոկոսի աղբյուր է հանդիսացել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, 6.1 տոկոսինը՝ ՀՀ քննչական կոմիտեն, 1.6 տոկոսինը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումների թիվը ևս մեծ է և կազմում է 2020-2022 թթ. հավաքագրված 5064 հրապարակումների 6.4 տոկոսը: Ըստ այդմ, զանգվածային լրատվության միջոցներով տարածվող թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը և առհասարակ թմրամիջոցներին վերաբերող հրապարակումների գերակշիռ մասը 2020-2022 թթ. թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում պատժողական գործառույթ իրականացնող կառույցների կողմից բացահայտումների վերաբերյալ է: Այս ցուցանիշը կազմակերպության կողմից իրականացվող մշտադիտարկման երկարատև տարիների ընթացքում փոփոխության չի ենթարկվում:

Մինչդեռ առողջապահական, սոցիալ-վերականգնողական ուղղվածության նույնիսկ քիչ թվով հրապարակումները, որպես այդպիսին չեն թիրախավորել թմրամիջոցներից կախվածության բուժման կարևորությունը ու թմրամիջոցների գործածման կանխարգելումը։

Այսպես, Առողջապահության նախարարության կողմից և վերջինիս տրամադրած տեղեկատվության հիման վրա հրապարակումները վերաբերել են օրենսդրական փոփոխությունների առաջարկներին (10 հրապարակում), թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվան (8 հրապարակում), Առողջապահության նախարարության ներկայացուցիչների՝ Կախվածությունների բուժման ազգային կենտրոն այցին (3 հրապարակում), միջազգային հարթակներում համագործակցության շրջանակներում հանդիպումներին (2 հրապարակում), Կախվածությունների բուժման ազգային կենտրոնում բուժման պայմաններին (1 հրապարակում), հրապարակումներից երեքում ոլորտին անդրադարձ է կատարվել այլ թեմաների համատեքստում։

Եվս 13 հրապարակումների աղբյուր են հանդիսացել Կախվածությունների բուժման ազգային կենտրոնը և Գյումրու հոգեկան առողջության կենտրոնը։ Այս հրապարակումներից 9-ը վերաբերել է թմրամիջոցների չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ վիճակագրական տվյալների տրամադրմանը, թմրամիջոցների վնասակար ազդեցությանը, բուժման վերաբերյալ հանրության իրազեկմանը, 2-ը՝ Մեթադոնային փոխարինող բուժման տրամադրմանը, մեկական հրապարակում՝ թմրամիջոց գործածող անձանց՝ տուբերկուլյոզի նկատմամբ խոցելի խումբ լինելուն և թմրանյութ առգրավելու նպատակով Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի վրա հարձակմանը։

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և վերջինիս տրամադրած տեղեկատվության հիման վրա 3 հրապարակում վերաբերել է օրենսդրական փոփոխությունների առաջարկներին և մեկ հրապարակում հատուկ խմբերին դասված որոշակի անձանց կացարանով ապահովման վերաբերյալ իրազեկմանը։ Հատկանշական է, որ վերջին հրապարակմամբ նախարարությունը տեղեկացնում է, որ թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց կացարան չի տրամադրվում։

Այսպիսով, կրկին արձանագրում ենք, որ թմրամիջների բնագավառի վերաբերյալ լուսաբանումները հիմնականում իրավապահ մարմինների կողմից են և հետևաբար՝ իրավական/քրեադատավարական բնույթի։ Իսկ թմրամիջոցներից կախվածության բուժման առաջնահերթության, վերականգնողական ծրագրերի, թմրամիջոցներից զերծ մնալու կարևորության և այլ առողջապահական ու սոցիալ-վերականգնողական ուղղվածության հրապարակումները գրեթե բացակայում են։ Ավելին, նման

ուղղվածությամբ հրապարակումների բացակայությունից, ինչպես նաև եզակի հրապարակումների բովանդակությունից կարող ենք եզրակացնել, որ պետության կողմից տարիներ շարունակ չեն նախատեսվում թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց համար սոցիալ-վերականգնողական ծրագրեր:

Հրապարակումների բնույթը, հանրային վերաբերմունքի ձևավորման վրա դրանց ազդեցությունը

Հրապարակումների բնույթը

2020-2022 թթ. ընթացքում հավաքագրված 5064 հրապարակումներից 4399-ը քրեադատավարական բնույթի են, 665-ը՝ ընդհանուր բնույթի տեղեկատվական (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ բովանդակության

N	Հրապարակման բովանդակությունը	2020 թ.		2021 թ.		2022 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Քրեադատավարական գործողությունների իրականացման վերաբերյալ	1168	89.4	1462	83	1769	88.7	4399	86.9
	Այդ թվում՝								
	Թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործություններ	4	0.3	1	0.1	8	0.4	13	0.6
	Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն՝ պաշտոնատար անձանց և քաղաքացիների մատնանշմամբ	1042	79.7	1264	71.7	1678	84.1	3984	78.7
	Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն՝ առանց կոնկրետ անձանց կամ մարդկանց խմբերի մատնանշման	115	8.8	166	9.4	84	4.2	365	7.2
	Քաղաքացիների նկատմամբ քրեական պատասխանատվության, քրեական հետապնդման և քրեադատավարական այլ գործողությունների մասին նյութեր	1054	80.6	1262	71.6	1686	84.5	4002	79
2	Ընդհանուր բնույթի տեղեկատվական	139	10.6	300	17	226	11.3	665	13.1
Ընդամենը		**1307**	**100**	**1762**	**100**	**1995**	**100**	**5064**	**100**

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, քրեադատավարական բնույթի հրապարակումներից 13-ը թմրամիջոց գործածող անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ են: Նման հրապարակումները կարող են էական ազդեցություն ունենալ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորման հարցում: Այս տեսանկյունից մտահոգիչ է 2022 թ. դրանց թվի աճը:

Գերակշռում են պաշտոնատար անձանց և քաղաքացիների մատնանշմամբ թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ հրապարակումները՝ 3984, իսկ առանց մատնանշման հրապարակումներն ընդամենը 365-ն են: Սա վկայում է, որ հրապարակումներում թմրամիջոցների հայտնաբերման, շրջանառության կանխարգելման համատեքստում հիմնական շեշտը դրվում է թմրամիջոց գործածողներին պատժելու վրա:

Այսպիսով, թմրամիջոցների բնագավառի վերաբերյալ հրապարակումները որպես կանոն քրեադատավարական գործողությունների մասին են, որոնցում որպես պայքարի հիմնական թիրախ ընտրվում են թմրամիջոց գործածողները, մինչդեռ մեծածախ թմրաբիզնեսով զբաղվողները որպես կանոն չեն բացահայտվում և նրանց ապօրինի գործունեությունը չի հանրայնացվում:

Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա

Հավաքագրված 5064 հրապարակումներից ընդամենը 2-ն են թմրամիջոց գործածող անձանց և նրանց խնդիրները ներկայացնում դրական տեսանկյունից, իսկ 6-ը՝ բացասական (տե՛ս աղյուսակ 4): Ընդ որում, 2022 թ. դրական վերաբերմունք ձևավորող որևէ հրապարակում չի արվել, մինչդեռ բացասական վերաբերմունք ձևավորող 3 հրապարակում է հավաքագրվել:

Աղյուսակ 4

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության

N	Հրապարակման բնույթը	2020 թ.		2021 թ.		2022 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Դրական վերաբերմունք ձևավորող	0	0	2	0.1	0	0	2	0.04
2	Բացասական վերաբերմունք ձևավորող	1	0.1	2	0.1	3	0.2	6	0.1
3	Դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող	1306	99.9	1758	99.8	1992	99.8	5053	99.8

Ընդամենը	1307	100	1762	100	1995	100	5064	100

Կարող ենք նշել, որ թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ առկա խարանը կոտրելու ուղղությամբ խոսույթ չի ձևավորվում, մինչդեռ թմրամիջոցների բնագավառում տարածվող առանձին հրապարակումներ և հրապարակումների զգալի մասն ամբողջությամբ ուղղված են թմրամիջոց գործածող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը:

Հավաքագրված 5064 հրապարակումներից 108-ը (2020 թ. 28 հրապարակում, 2021 թ.՝ 38, 2022 թ.՝ 42) պարունակել են խտրական բառեր, որպես կանոն՝ «թմրամոլություն» և «թմրամոլ»: Հավաքագրվել է նաև 21 հրապարակում, որոնք թմրամիջոցների բնագավառին չեն վերաբերել, սակայն պարունակել են վերոնշյալ խտրական բառերը հիմնականում կիրառվելով որպես վիրավորանք, պարսավանք:

Հարկ է ընդգծել, որ խտրական բառապաշարով 108 հրապարակումներից 18-ը տարածվել են պետական մարմինների պաշտոնական էջերով (ՀՀ ոստիկանություն՝ 16 հրապարակում, ՀՀ առողջապահության նախարարություն՝ 1, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ 1) և ևս 47-ի տեղեկատվության աղբյուր են հանդիսացել այլ գերատեսչություններ:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ թմրամիջոց գործածող անձինք թիրախավորվում են, նրանց նկատմամբ խարանը շարունակվում է, իսկ համակարգված աշխատանք խարանը վերացնելու, թմրամիջոցներից կախվածությունը որպես հիվանդություն դիտարկելու ուղղությամբ բացակայում են:

Հրապարակումների ազդեցությունը թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա

2020-2022 թթ. հավաքագրված 5064 հրապարակումներից 15-ը (0.3 տոկոս) նպաստում են թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային բացասական վերաբերմունքի ձևավորմանը, մյուսները չեզոք բնույթի են, այսինքն ակնհայտորեն չեն նպաստում դրական կամ բացասական վերաբերմունքի ձևավորմանը (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Հրապարակումների դասակարգումը՝ ըստ թմրամիջոցների և դրանց գործածման նկատմամբ հանրային վերաբերմունքի ձևավորման վրա ունեցած ազդեցության

N	Նյութի բնույթը	2020 թ.	2021 թ.	2022 թ.	Ընդամենը

		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Դրական վերաբերմունք ձևավորող	0	0	0	0	0	0	0	0
2	Բացասական վերաբերմունք ձևավորող	10	0.8	4	0.2	1	0.1	15	0.3
3	Դրական կամ բացասական վերաբերմունք չձևավորող	1297	99.2	1758	99.8	1994	99.9	5049	99.7
Ընդամենը		**1307**	**100**	**1762**	**100**	**1995**	**100**	**5064**	**100**

Թեև դրական է երեք տարիների ընթացքում թմրամիջոցների և դրանց օգտագործման նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը նպաստող հրապարակումների բացակայությունը, այնուամենայնիվ բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումների չնչին թիվը վկայում է համակարգված, հստակ վերաբերմունք ձևավորելուն ուղղված իրազեկման միջոցառումների բացակայության մասին: Այս հրապարակումներում անդրադարձ է արվում ոչ բժշկական նպատակով թմրամիջոցների օգտագործման բացասական հետևանքներին, հանրային ճանաչում ունեցող անձինք պատմում են թմրամիջոցների օգտագործման հետ կապված վատ փորձառության մասին:

Այսպիսով, ոչ բժշկական նպատակով թմրամիջոցների օգտագործման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորող հրապարակումների բացակայությունը և բացասական վերաբերմունք ձևավորող հրապարակումների առկայությունը կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ թմրամիջոցների օգտագործման կանխարգելման ուղղությամբ: Թմրամիջոցների օգտագործման կանխարգելման նպատակով ՀՀ առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է պլանավորել և իրականացնել համապատասխան համակարգված աշխատանքներ, այդ թվում՝ հանրային շրջանում իրազեկման արշավ:

Հրապարակումներում մարդու իրավունքների խախտման դեպքերի արտացոլումը

2020-2022 թթ. հավաքագրված 5064 հրապարակումներից 55-ում (մոտ 1.1 տոկոս) առկա են անձնական տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է նույնականացնել անձանց (տե՛ս աղյուսակ 6): Այս հրապարակումները փաստացի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման դրսևորումներ են:

2021 թ. տարածվել է երկու հրապարակում Մարդու իրավունքների պաշտպանի տրամադրած տեղեկության հիման վրա, որում նշվում է, որ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում ծառայողներն անմիջական մասնակցություն են ունենում ազատությունից զրկված անձանց բժշկական օգնության կազմակերպմանը, տեղյակ են

դեղամիջոցների և դրանց չափաբաժինների մասին, ինչպես նաև հասանելիություն ունեն բժշկական գաղտնիք պարունակող մատյաններին: Ըստ հաղորդագրության՝ ծառայողների անմիջական մասնակցությամբ է իրականացվում նաև «Մեթադոնային փոխարինող բուժման» կազմակերպումը[5]:

Աղյուսակ 6

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների վիճակագրությունը՝ 2016-2022 թթ.

Տարեթիվը	Հրապարակումների թիվը	Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների	
		Թիվը	Տոկոսը
2016 թ.	1505	243	16.1
2017 թ.	1168	229	19.6
2018 թ.	981	203	20.7
2019 թ.	2053	145	7.1
2020 թ.	1307	12	0.9
2021 թ.	1762	6	0.3
2022 թ.	1995	37	1.9
Ընդամենը	**10771**	875	**8.1**

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտմամբ հրապարակումների թիվը վերջին երեք տարիների ընթացքում կտրուկ նվազել է: Ինչպես նշել ենք 2017-2019 թթ. մշտադիտարկման արդյունքների տեղեկանքում[6], սա առավելապես պայմանավորված է ՀՀ ոստիկանության կողմից անձնական տվյալների հրապարակման գրեթե բացակայությամբ: Այսպես, 2020-2022 թթ. անձնական տվյալներ պարունակող 55 հրապարակումներից մեկն է տարածվել ՀՀ ոստիկանության կայքէջով և ևս 4-ը ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության հիման վրա, մինչդեռ օրինակ 2018 թ. անձնական տվյալներ պարունակող 203 նյութերից 57-ն էր հրապարակվել ՀՀ ոստիկանության կայքէջով և 91-ը ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության հիման վրա: Միևնույն ժամանակ, մտահոգիչ է 2022 թ. նախորդ տարվա համեմատ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտմամբ հրապարակումների թվի աճն ավելի քան 6 անգամ:

Անձնական տվյալներ պարունակող 55 հրապարակումներից 12-ի աղբյուրը ՀՀ քննչական կոմիտեն է, 38-ը՝ զանգվածային լրատվության միջոցինն են:

[5] Տե՛ս https://galatv.am/hy/3012053/
[6] Տե՛ս էջ 16, https://hcav.am/wp-content/uploads/2020/08/drug-users-media-2018-2019.pdf

2020 թ. անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող 12 հրապարակումներում տեղեկություններ են արտացոլվել 12 դեպքի վերաբերյալ, 2021 թ. անձնական տվյալներ պարունակող 6 հրապարակումներում՝ 5 դեպքի և 2022 թ. անձնական տվյալներ պարունակող 37 հրապարակումներում՝ 14 դեպքի վերաբերյալ: Հարկ է արձանագրել, որ 2020-2022 թթ. անձնական տվյալներ պարունակող 55 հրապարակումներում տրամադրվել է տեղեկություն 74 անձի վերաբերյալ, որոնց հնարավոր է նույնականացնել և 42 անձի կողմից թմրամիջոց գործածելու կամ թմրամիջոց գործածելու կասկածանքի վերաբերյալ, ինչի հետևանքով խախտվել է նաև անձի առողջության վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը խախտող հրապարակումների դասակարգումը՝ ըստ կոնկրետ անձանց նույնականացման և թմրամիջոցների գործածման

N	Հրապարակման տեսակը	2020 թ.		2021 թ.		2022 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Հրապարակումների թիվը, որոնք պարունակում են անձնական տվյալներ	12	0.9	6	0.3	37	1.9	55	1.1
2	Անձնական տվյալներ պարունակող հրապարակումներում անձանց թիվը, ում հնարավոր է նույնականացնել	20	1.5	8	0.5	46	2.3	74	1.5
3	Անձնական տվյալներ պարունակող հրապարակումներում անձանց թիվը, ովքեր թմրամիջոց են գործածում կամ կասկածվում են թմրամիջոցի գործածման մեջ	6	0.5	7	0.4	29	1.5	42	0.8
Հավաքագրված հրապարակումների ընդհանուր թիվը		**1307**		**1762**		**1995**		**5064**	

2020-2022 թթ. հավաքագրվել է նաև 227 հրապարակում, որոնք անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ են պարունակում և որոշ դեպքերում դրանցում հնարավոր է նույնականացնել անձանց (տե՛ս աղյուսակ 8): Նշված 227 հրապարակումները վերաբերել են 192 դեպքի (2020 թ. 41 դեպքի, 2021 թ.՝ 54, 2022 թ.՝ 97): Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող 227 հրապարակումներում տրամադրվել է տեղեկություն 271 անձի

վերաբերյալ, որոնց հնարավոր է նույնականացնել և 124 անձի կողմից թմրամիջոց գործածելու կամ թմրամիջոց գործածելու կասկածանքի վերաբերյալ:

Աղյուսակ 8

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ պարունակող հրապարակումների դասակարգումը՝ ըստ կոնկրետ անձանց նույնականացման և թմրամիջոցների գործածման

N	Հրապարակման տեսակը	2020 թ.		2021 թ.		2022 թ.		Ընդամենը	
		Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը	Թիվը	Տոկոսը
1	Հրապարակումների թիվը, որոնք պարունակում են անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման վտանգներ	49	3.7	65	6.7	113	5.7	227	4.5
2	Հրապարակումներում անձանց թիվը, ում նույնականացնելու վտանգ է առկա	51	3.9	83	4.7	117	5.9	251	5
3	Հրապարակումներում անձանց թիվը, ում նույնականացնելու վտանգ է առկա և ովքեր թմրամիջոց են գործածում կամ կասկածվում են թմրամիջոցի գործածման մեջ	24	1.8	41	2.3	59	3	124	2.4
Հավաքագրված հրապարակումների ընդհանուր թիվը		**1307**		**1762**		**1995**		**5064**	

Այսպիսով, արձանագրում ենք, որ թեև 2020-2022 թթ. նախորդող տարիների համեմատ նվազել են, այնուհանդերձ շարունակվել է անձնական տվյալները բացահայտող, անձին նույնականացնելու վտանգներ պարունակող հրապարակումների տարածումը: Միևնույն ժամանակ, մտահոգիչ է 2022 թ. նման հրապարակումների թվի աճը 2021 թ.-ի համեմատ ավելի քան 6 անգամ:

Ամփոփում

2020-2022 թթ. ընթացքում թմրամիջոց գործածող անձանց, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և առհասարակ թմրամիջոցների վերաբերյալ հավաքագրվել և վերլուծվել է 5064 հրապարակում: Այդ հրապարակումներից 1185-ը տարածվել է պետական

մարմինների պաշտոնական կայքէջերով, 3879-ը՝ զանգվածային լրատվության միջոցների էջերում։

Հրապարակումները հիմնականում տարածվել են իրավապահ մարմինների՝ առավելապես ՀՀ ոստիկանության կայքէջով։ Հետևապես թմրամիջոցների բնագավառի վերաբերյալ հրապարակումներում գերակշռել են քրեադատավարական տարրեր պարունակողները։ Ընդ որում այս հրապարակումներում որպես կանոն մատնանշվել են անձինք ու նրանց քրեադատավարական արարքը։

Տարածվել են հրապարակումներ, որոնք մարդու իրավունքների խախտման տարրեր են պարունակում։ Այդ հրապարակումներում մասնավորապես անձնական տվյալներ են առկա և հնարավոր է նույնականացնել անձին կամ կա նույնականացման վտանգ։

Ավելին, թմրամիջոց գործածող անձինք թիրախավորվել են որպես հանցագործություն կատարողներ, մինչդեռ թմրամիջոցներից կախվածությունը որպես հիվանդություն դիտարկելու և այս մոտեցմամբ քաղաքականություն իրականացնելու ուղղությամբ աշխատանքներ պատկան մարմինների կողմից տեսանելի չեն։

Ինչպես ուսումնասիրվող բոլոր տարիներին, 2020-2022 թթ. ևս արձանագրվել է թմրամիջոցներից կախվածության բուժման առաջնահերթության, վերականգնողական ծրագրերի, թմրամիջոցներից զերծ մնալու կարևորության և այլ առողջապահական և սոցիալ-վերականգնողական ուղղվածության հրապարակումների սակավությունը, ինչը կարող է վկայել այդ ուղղությամբ համակարգված աշխատանքների բացակայության մասին։

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կազմակերպության կողմից ուսումնասիրության տարիներին գրանցվում են դրական միտումներ, որոնք թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանությանն են վերաբերում։ Միևնույն ժամանակ վերջին մշտադիտարկման արդյունքները փաստում են իրավունքների խախտմամբ հրապարակումների աճի միտում։ Ըստ այդմ, արձանագրված խնդիրների վերացման նպատակով հարկավոր է վերանայել թմրամիջոցների բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝ դրա մաս դարձնելով նաև պետական մարմինների և զանգվածային լրատվության միջոցներով բնագավառի վերաբերյալ խոսույթի փոփոխությունն ու թմրամիջոցների գործածման վերաբերյալ բացասական վերաբերմունք ձևավորող իրազեկման արշավների կազմակերպումը։